# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, , berdik.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

**04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 26**

## ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանարապետության օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետով

***Բերդիկ համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել Բերդիկ համայնքի ավագանու թիվ 8 հերթական նիստի•օրակարգի հետևյալ հարցերը՝
1.Բերդիկ համայնքի 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերի սահմանելու մասին
2.Բերդիկ համայնքի համայնքապետարանի և համայնքապետարանին կից գործող գրադարանի 2018 թվականի գույքագրաման արդյունքների ամփոփման և հաստանման մասին
3. Բերդիկ համայնքի 2019 թվականի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների հաստիքացուցակի և պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին
4.Բերդիկ համայնքի 2018 թվականի բյուջեի մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ - 3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ /կողմ/

ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ /կողմ/

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ /կողմ/

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, , berdik.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 27-Ն**

## ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանարապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով՝

***Բերդիկ համայնքի ավագանի որոշում է՝***

Բերդիկ համայնքի ավագանու 2018 թվկանի բյուջեի մեջ կատարել հատևյալ փոփոխությունները՝
1.Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ՝ /11-01-02-55/ գործառնական դասակարգման 4891 / պահուստային միջոցներ/ հոդվածից տեղափոխել 240.000/երկու հարյուր քառասուն հազար/ դրամ և հատկացնել կառավարման մարմնի պահպանման 5113 / շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում / հոդվածին:
2. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդ՝ /11-01-02-55/ գործառնական դասակարգման 4891 պահուստային միջոցներ հոդվածից տեղափոխել 150.000/ մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ և հատկացնել մշակույթային միջոցառումների իրականացում հաշվի 4269 / հատուկ նպատակային այլ նյութերի հոդվածին/:
3. Կառավարման մարմնի 4251/շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ հոդվածից տեղափոխել 400.000 / չորս հարյուր հազար/ դրամ և հատկացնել արտաքին լուսավորության ցանցի հիմնում հաշվի 5112 / շենքերի և շինությունների շինարարություն/ հոդվածին:.
4.Կառավարման մարմնի 4251 /շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ հոդվածից տեղափոխել 580.000 /հինգ հարյուր ութանասուն հազար/ դրամ և հատկացնել մայրուղիների և փողոցների վերակառուցում հաշվի 4251/ շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում/ հոդվածին:

Կողմ - 3 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՆԻԿ /կողմ/

ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ /կողմ/

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ բացակա

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ բացակա

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ /կողմ/

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, , berdik.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 28-Ն**

## ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանարպետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով,<< Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանարպետության օրենքի 11-րդ 12-րդ և 14-րդ հոդվածների պահանջներով

***Բերդիկ համայնքի ավագանին որոշում է՝***

Սահմանել Բերդիկ համայնքի տարածքում 2019թ.-ի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը ՝ համաձայն հավելվածի :

Կողմ - 3　　　　Դեմ -0　　　　Ձեռնպահ -0

ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ (կողմ)

ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ (կողմ)

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ (բացակա)

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ (բացակա)

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ (կողմ)

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝**　　　　**ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ N1
Բերդիկ համայնի ավագանու
2018թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 28 -Ն որոշում

**ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ**

ՀՀ Արարատի մարզի Բերդիկ համայնքի տարածքում 2019թ. համար սահմանել տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար

ա.Բերդիկ համայնքի վարչական տարածքում շենքերի և շինությունների համար ՝ մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,ինչպեսնաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 7500 դրամ:

բ) սույն կետի <<ա>> ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 15000 դրամ:
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝25000 դրամ:

Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերեսունեցող շենքերի և շինություններիհամար ՝ 1500դրամ.
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար ՝ 2500 դրամ:

2) Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների

վերակառուցման , վերականգման, ուժեղացման , արդիականացման և  բարեկարգման աշխատանքների  (բացառությամբ Հայաստանի Հանրապետության  օրենդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով
ա) չի նախատեսվում կցակառույցների,վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում ՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում, կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն ՝1500դրամ:
բ/բացի շենքերի և շինությունների վերկառուցման ուժեղացման վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից՝ նախատեսվում է նաև կսակառույցների, վերնակառույցնեչրի շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների/այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսին ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով:
գ.նախատեսվում է միայն կցակառույցների,վերնակառույցների ,շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ստորգետնյա/ շինարարության կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն,ապա ,սույն օրենքի իմաստով այն համարվում է նոր շինարարություն ,որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերիը:
3)  Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ  Հայաստանի Հանրապետության  օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար ՝ 2500 դրամ:

4) Համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքներիր և (կամ)ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար
ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյանկի համար՝
- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,
-  26-ից մինչև 50  քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցողի իմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000 դրամ,
-51-ից մինչև 100  քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500դրամ,
100-ից 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների

ներսում վաչառքի կազմակերպման դեպքում 10000 դրամ

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2500 դրամ,
- 26-ից մինչև 50քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 3000դրամ,
- 51-ից մինչև 100քմ ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 6500 դրամ,

100-ից մինչև 200 քառակուսի մետրի ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում 10000 դրամ

5) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում <<Առևտրի և ծառայությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված բացօթյան առևտրի կազմակերպման թույլտվության համար, յուրաքանչյուր օրվա համար 350դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար

6) Ավագանու սահմանված կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ.

բ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ.

գ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ.

դ) այլ արտաքին գովազդի համար՝ 750 դրամ.

ե) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700դրամ:

Բերդիկ համայնքի ավագանու որոշմամբ սույն դրույքաչափերում կիրառվել է 0,5 գործակիցը:

2.Բերդիկ համայնքի տեղական վճարների դրույքաչափերը՝

1/համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքինը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար փոխհատուցման վճար՝ 1000 դրամ

2/ Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար ՝ 1000 դրամ,

3/տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված զանազան ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճար՝ 1000 դրամ :
. Մրցույթների և օտարումների համար քայլի չափը սահմանել՝ 5000 ՀՀդրամ:

3. Համայնքում իրավաբանական անձանց համար աղբահանության վճար սահմանվում է յուրաքանչյուր ամսվա համար .

1) Առևտրի /այդ թվում շուկաների /, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ՝ 20 ՀՀ դրամ/ 1 քառ.մ:

2) Կրթական, մշակույթային, առողջապահական, սպորտային շինություններ՝ 2 ՀՀ դրամ/1 քառ.մ>> :

4) Արտադրական , արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ՝ 4 ՀՀ դրամ /1 քառ.մ :

5/ աղբահանության և կենցաղային աղբը հեռացնելու համար վճար՝ համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝
ա/ ըստ հաշվառվա ծ անձանց քանակի համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար առավելագույնը ամսական 50 դրամ կամ
բ/ ըստ բնակելի շինության կամ բնակարանի ընդանուր մակերեսի մեկ քառակուսի մետր մակերոսի համար՝ առավելագույնը 1 դրամ:
6/ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝
ա/ըստ ծավալի մեկ խորհանարդ մետր աղբի համար առավելագունը 3000 դրամ.
7/Անասնաբուժական ծառայությունների համար սահմանել վճար՝
ա/մեկ պայմանական միավոր գլխաքանակի համար 200 դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՕՖԵԼՅԱ ԱՎԱԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Բերդիկ, , berdik.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 29-Ն**

## ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԻ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ և 28-րդ կետերի պահանջներով

***Բերդիկ համայնքի ավագանին որոշում `է՝***

Հաստատել Բերդիկ համայնքի ղեկավարի աշխատավարձը, համայնքապետարանի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Կողմ - 3 Դեմ - Ձեռնպահ -

ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ /կողմ/

ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ /կողմ/

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ բացակա

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ բացակա

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ /կողմ/

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

Հավելված 1
Բերդիկ համայնքի ավագանու
2018թ.-ի դեկտեմբերի 4-ի թիվ 29-Ն որոշման

Բերդիկ համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը` - 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը`

| Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 230 000 |
| Համայնքային ծառայողներ | | |
| Աշխատակազմի քարտուղար /1.2-1/ | 1 | 105000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ /3.1-1/ | 1 | 100000 |
| Աշխատակազմի առաջին կարգի մասնագետ/3.2-1 | 1 | 80000 |
| Տեխսպասարկման անձնակազմ | | |
| Հավաքարար | 1 | 80000 |
| Հարկահավաք- Էլեկտրիկ | 1 | 75 000 |
| Վարորդ | 1 | 80000 |
| Այգեպան -ցրիչ | 1 | 80 000 |
| Մշակույթ | | |
| Գրադարանավար | 1 | 80000 |
| Հայեցողական պաշտոններ | | |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 80000 |
| Ընդամենը | 10 | 990 000 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՕՖԵԼՅԱ ԱՎԱԳՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարարտի մարզի Բերդիկ համայնք
ՀՀ, Արարարտի մարզ, գ.Բերդիկ, , berdik.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

**04 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 30-Ա**

**ԲԵՐԴԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ և ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ԳՐԱԴԱՐԱՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ և ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանարպետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետի պահանջներով

***Բերդիկ համայնքի ավագանին որոշում է՝***

Հաստատել Բերդիկ համայնքի համայնքապետարանի և համայնքապետարանին կից գործող գրադարանի 2018 թ. գույքագրման արդյունքները համաձայն կից հավելվածի:

Կողմ - 3 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

ԱՎԱԳՅԱՆ ՄԻԱՍՆԻԿ /կողմ/

ԳԱԼՍՏՅԱՆ ՎԱՐԴԱՆ /կողմ/

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ /կողմ/

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԻՇԽԱՆ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ**

ՀԱՎԵԼՎԱԾ
Բերդիկ համայնքի ավագանու
2018 թվականի դեկտեմբերի 4-ի թիվ 30-Ա որոշում

# ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱԿՏ

Համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման հանձնաժողովը ի դեմս նախագահ՝ համայնքի ղեկավարի տեղակալ Մ.Հարությունյանի, անդամներ՝ համայնքապետարանի վարորդ Ս.Ֆահրադյանի համայնքապետարանի գրադարանավար՝ Լ.Հակոբյանի, հիմք ընդունելով 2018թ. դեկտեմբերի 4-ի թիվ 30-Ա որոշումը, կազմեցինք սույն ակտը այն մասին,որ ս/թ նոյեմբերի 25-ից մինչև դեկտեմբերի 1-ը կատարեցինք համայնքին պատկանող գույքի, կառույցների , շինությունների և առկա այլ ապրանքների գույքագրում՝

| Հ/Հ | ԳՈՒՅՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՏԱՐԵԹԻՎԸ | ՔԱՆԱԿԸ /միավոր/ | ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ԱՐԺԵՔԸ /ՀՀ դրամ/ | ՀԱՇՎԱՐԿՎԱԾ ՄԱՇՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ | ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ | ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքապետարանի շենք | 1973 | 1 | 42.562.000 | 0 | առկա | բավարար |
| 2 | Զգեստապահարան | անհայտ | 1 | 103 000 | 0 | առկա | բավարար |
| 3 | Երկաթյա պահարան | անհայտ | 1 | 14 136 | 0 | առկա | բավարար |
| 4 | Ջրավազան | անհայտ | 1 | 42 825 | 0 | առկա | անսարք |
| 5 | Հեռուստացույց | անհայտ | 1 | 150 000 | 0 | առկա | բավարար |
| 6 | Գազի խողովակաշար | անհայտ | 1 | 11 199 784 | 0 | առկա | բավարար |
| 7 | Ավտոմեքենա | 2006 | 1 | 3 740 000 | 872.000 | առկա | բավարար |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | Նիվա | | | | | | |
| 8 | Ջահ | անհայտ | 2 | 30 000 | 0 | առկա | բավարար |
| 9 | Օդորակաիչ | անհայտ | 1 | 380 000 | 0 | առկա | բավարար |
| 10 | Համակարգիչ | անհայտ | 1 | 320 000 | 0 | առկա | բավարար |
| 11 | Համակարգիչ | անհայտ | 2 | Նվիրատվություն | 0 | առկա | բավարար |
| 12 | Տպիչ սարք | անհայտ | 1 | 150 000 | 0 | առկա | անսարք |
| 13 | Տպիչ սարք | անհայտ | 1 | Նվիրատվություն | 0 | առկա | բավարար |
| 14 | Սկաներ | անհայտ | 1 | Նվիրատվություն | 0 | առկա | բավարար |
| 15 | UPS -600 | անհայտ | 1 | 30 000 | 0 | առկա | անսարք |
| 16 | UPS-AEG | անհայտ | 2 | Նվիրատվություն | 0 | առկա | բավարար |
| 17 | Գրասենյակային աթոռ | անհայտ | 6 | 72 000 | 0 | առկա | բավարար |
| 18 | Զուգարանի շենք | անհայտ | 1 | 36 877 | 0 | առկա | անսարք |
| 19 | Համայնքի ղեկավարի աշխատանքային սեղան, դիմադիր և կողադիր սեղաններ, տումբա | անհայտ | 1 | 140 000 | 0 | | բավարար |
| 20 | Ավտոմեքենայի գազի փուչիկ | 2013 | 1 | 140 000 | 0 | առկա | բավարար |
| 21 | Ավտոմեքենայի համակարգ | անհայտ | 1 | 360 000 | 0 | առկա | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 22 | Համակարգչի սեղան | անհայտ | 3 | 165 000 | 0 | առկա | բավարար |
| 23 | Գրասեղան | անհայտ | 2 | 90 000 | 0 | առկա | բավարար |
| 24 | Աթոռ | անհայտ | 1 | 150 000 | 0 | առկա | բավարար |
| 25 | Աթոռ | անհայտ | 10 | 140 000 | 0 | առկա | բավարար |
| 26 | Գրապահարան | անհայտ | 1 | 170 000 | 0 | առկա | բավարար |
| 27 | Համակարգիչ INTEL | 2017 | 1 | 300 000 | 225.000 | առկա | լավ |
| 28 | Տեսանկարող սարք | 2017 | 6 | 400 000 | 300.000 | առկա | լավ |
| 29 | Աթոռ ղեկավարի | 2017 | 1 | 180 000 | 172.000 | առկա | լավ |
| 30 | Ընդունարանի կահույք | 2017 | 1 | 150 000 | 135.000 | առկա | լավ |
| 31 | Աթոռ գրասենյակի | 2017 | 6 | 78  000 | | առկա | |
| 32 | Նոթբուք | 2017 | 1 | 400 000 | 300.000 | առկա | լավ |
| 33 | Տպիչ սարք Canon | 2017 | 1 | 95 000 | 71250 | առկա | լավ |
| 34 | Սկաներ HPL2733A | 2018 | 1 | 53.700 | | առկա | Լավ |
| 35 | Տեսանկարահանող սարք | 2018 | | 110.000 | | առկա | Լավ |
| 36 | Հեռուստացույց HISENS 32N2170 HW | 2018 | 1 | 125000 | | առկա | Լավ |
| 37 | Ջրի ապարատ VIKASS VWDI55W | 2018 | 1 | 62.000 | | առկա | Լավ |
| 38 | Ներկառուցվող | 2018 | | 57.000 | | առկա | լավ |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | գազ SIMFEN H6MR41 SAI | | | | | | |
| 39 | Գրադարանի գրքեր ընդ. | | 6639 | - | - | առկա | բավարար |
| 40 | Դուրս գրված գրքեր | 2017 | 365 | | | առկա | |
| 41 | Ձեռք բերված գրքեր | 2017 | 32 | 49980 | | առկա | լավ |
| 42 | Ձեռք բերված գրքեր | 2018 | 49 | 50000 | | առկա | լավ |
| 43 | Պոլիէթիլենային խաղովակ PE 100,d-63մմ - | 2018 | 200մ | 175200 | | առկա | |
| 44 | Պոլիէթիլենային խաղովակ PE 100,d-20մմ | 2018 | 135մ | 21600 | | առկա | |
| 45 | Պոլիէթիլենային խաղովակ PE 100,d-63մմ PN 10 | 2017 | 450մ | 387180 | | առկա | |
| 46 | Պոլիէթիլենային խաղովակ PE 100,d-20մմ | 2017 | 133 մ | 15960 | | առկա | |
| 47 | Լվացարան | 2018 | 1 | 35000 | | առկա | |
| 48 | Ցուցանակ | 2018 | 1 | 40000 | | առկա | |
| 49 | լինոլիում | 218 | 94մ/ք | 131600 | | առկա | |
| 50 | շերտավարագույր | 2018 | 32,9մ/ք | 125020 | | առկա | |
| 51 | Վարագույր | 2018 | 24ք/մ | 48000 | | առկա | |
| 52 | Խոհանոցային կահույք | 2018 | | 500000 | | առկա | |
| 53 | Պահարան | 2018 | 2 | 240000 | | առկա | |
| 54 | Կաթսա | 2018 | 1 | 412000 | | առկա | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | իտալական | | | | | | |
| 55 | Ռադիատոր տիտան | 2018 | 70 | 231000 | | առկա | |
| 56 | Ռադիատոր սավրալիտ | | 80 | 248000 | | առկա | |
| 57 | Շերտավարագույր | | 40քմ | 120000 | | բացակա | |
| | | | | | | | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ՝ | | | 65.026.862 | 2.075.250 | | |
| | | | | | | | |

Հանձնաժողովի նախագահ՝ Մ.Հարությունյան

Անդամներ՝ Ս.Ֆահրադյան

Լ.Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՕՖԵԼՅԱ ԱՎԱԳՅԱՆ